Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավաասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

26.412

05 JAN 2010 C 32-К / А 513

4-21

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ-ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ԱՐՏԵԼԻ

(Պրոմկոլխոզ)

Востоковедения
Академии Наук
СССР

334.63
4-21

1932 ԵՐԵՎԱՆ

Սույն կանոնադրությունը, իբրև օրինակելի, հաստատված է ԽՍՀՄ-ի Ժողովրդական Տնտեսության Գերագույն Խորհրդի, Համամիութենական գյուղատնտեսական կոլեկտիվների Միության և արհեստագործական կոոպերացիայի Համամիութենական խորհրդի կողմից:

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Արհեստագործական-գյուղատնտեսական կոոպերատիվ արտելի (պրոմկոլխոզ), վոր անվանվում է . . . . Արհեստագործական գյուղատնտեսական արտել:

## 1. ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ

1. . . . . . . . . . . . . . շրջանի . . . . . . . . գյուղի բատրակները, չքավորները ու միջակները կամովին միանում և կազմում են Արհեստագործական-գյուղատնտեսական արտել (պրոմկոլխոզ), վորպեսզի արտադրության ընդհանուր միջոցներով և իրենց անդամների կազմակերպված աշխատանքով, կառուցեն խոշոր տնայնա-արհեստագործական-յերկրագործական կոլեկտիվ տնտեսություն և դրանով ապահովեն իրենց իրական, լիակատար հաղթանակը՝ ընդդեմ կուլակների, բոլոր տեսակի շահագործողների և աշխատավորության թշնամիների. վերացնեն կարիքն ու տգիտությունը, տեղում, հետ մնացած անհատական տնտեսություններում ստեղծեն աշխատանքի բարձր արտադրողականություն և կոլեկտիվ տնտեսության ապրանքայնություն, իրենց անդամներին լծելով մեր յերկրի սոցիալիստական ընդհանուր շինարարությանը:

2. Պրոմկոլխոզը, վոր կազմակերպվում է . . .



MAR 2010

. . արհեստագործության հիմունքով, իրեն նպատակ է դնում կազմակերպել և զարգացնել . . . . . . արհեստը:

Այն դեպքերում, յերբ Պրոմկոլխոզի շրջանում գոյություն ունեն ուրիշ արհեստներ, վորոնք չեն կարող ինքնուրույն արտելներ կազմել, այդ արհեստների սպասարկումը կարող է իր վրա վերցնել Պրոմկոլխոզը:

Դրա հետ միասին, Պրոմկոլխոզը, ինչպես իր, արհեստագործությանը մասնակցող անդամների, այնպես էլ կոլեկտիվ տնտեսությունը վարելու համար Պրոմկոլխոզ մտնողների գյուղական տնտեսությունները կոլեկտիվացման յենթարկելու միջոցով՝ կազմակերպում է համայնացված գյուղատնտեսական արտադրություն:

## II. ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

3. Արհեստագործական կոլեկտիվ տնտեսություն վարելու համար անհրաժեշտ, առանձին անդամներին պատկանող, արտադրության հիմնական գործիքները— յենթակա յեն համայնացման, ընդհանուր ժողովի վորոշմամբ և նրա նշած սահմաններում՝ հիմնված սույն կանոնադրության և Արհեստագործական միության ցուցմունքների վրա:

4. Պրոմկոլխոզի այն անդամները, վորոնք դեռևս ընդհանուր արհեստանոցները չեն տեղափոխված աշխատելու՝ իրենց արտադրությունը կատարում են վերամշակության սկզբունքով՝ ստանալով իրենց աշխատանքի վարձատրությունը: Առանձին դեպքերում, աշխատածավալ զբաղմունքների ապարկում, յերբ վերամշակման է յենթարկվում տեղական վոչ դեֆիցիտային հումույթը, Պրոմկոլխոզի վարչության վորոշմամբ, վերջինիս առանձին անհատները կարող են ինքնուրույն կերպով տանել իրենց զբաղմունքը: Այդ անդամների, Պրոմկոլխոզում, կամ ինքնուրույն կերպով կատարած արտադրանքի վաճառքի կարգը սահմանում է Պրոմկոլխոզի վարչությունը՝ Արհեստագործական կոոպերացիայի բարձր որգանների դիրեկտիվների համաձայն:

26.412

17 MAY 2013

## III. ՀՈՂԻ ՄԱՍԻՆ

5. Պրոմկոլխոզի անդամների հողաբաժինների միջի սահմանները վերացվում են և բոլոր դաշտային բաժնեհողերը միացվում մի ընդհանուր դաշտ կազմում, վորը անցնում է Պրոմկոլխոզի կոլեկտիվ օգտագործմանը։

Բոլոր տեսակի հողաբաժինները համայնացնելիս, անհատական օգտագործման համար թողնվում են միայն տնամերձ հողամասերը (բանջարանոցները, այգիները և այլն) ըստ վորում, անհրաժեշտության դեպքում, ընդհանուր ժողովի կողմից հաստատված — վարչության վորոշմամբ՝ տնամերձ հողամասերի տարածությունը փոփոխության է յենթարկվում գյուղատնտեսական կոլեկտիվների սիստեմում կիրառվող հիմունքներով։

6. Պրոմկոլխոզի միասնական դաշտի տարածությունը վոչ մի դեպքում չպետք է փոքրանա։

Պրոմկոլխոզից դուրս յեկող անդամներին ընդհանուր հողամասից բաժին տալն արգելվում է։

Պրոմկոլխոզից հեռացողները կարող են հողաբաժին ստանալ միայն պետական ազատ հողերի ֆոնդից։

## IV. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

7. Համայնացվում են — բոլոր աշխատող անասունները, գյուղատնտեսական գործիքները, ապրանքային և արդյունատու բոլոր անասունները, պահեստի բոլոր տեսակի սերմերը, կերի միջոցներն այն չափով, ինչ չափով անհրաժեշտ է համայնացրած անասունների պահպանման համար. տնտեսական բնույթ կրող այն բոլոր շենքերը, վորոնք անհրաժեշտ են Պրոմկոլխոզի տնտեսության համար և վերամշակության բոլոր ձեռնարկությունները։ Պրոմկոլխոզի անդամների բնակության շենքերը չեն համայնացվում։

Գյուղատնտեսական ինվենտարը համայնացնելիս, Պրոմկոլխոզի անդամների անհատական օգտագործմանն են թողնվում, համայնացված տնամերձ հողամասերի



ՊԵՏ. ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ—Арм ССР
и. им. А. Мясникяна
60332-67

մշակման համար անհրաժեշտ, մանր գյուղատնտեսական գործիքները։

Պրոմկոլխոզի վարչությունը, անհրաժեշտության դեպքում, համայնացրած աշխատավոր անասուններից մինիմալ քանակի ձիեր կամ յեզներ է հատկացնում Պրոմկոլխոզի անդամների անձնական կարիքները բավարարելու համար։

Տնտեսությունների միակ կովը չի համայնացվում։ Շատ կով ունեցող տնտեսությունների անհատական օգտագործման համար թողնվում է միայն մի կով, մնացածը համայնացվում է։ Արտադրող անասուններն անպայմանորեն համայնացվում են (հովատակ, ցուլ և այլն)։

Համայնացված կաթնատու անասուններից կազմվում է Պրոմկոլխոզի ապրանքային տնտեսությունը։

Մանր անասունների, այսինքն խոզերի և վոչխարների համայնացումը կատարվում է՝ մանր անասունների զարգացած արդյունաբերական անասնապահության շրջաններում, ուր Պրոմկոլխոզի սահմանած քանակով մանր անասուններ են թողնվում անդամների անհատական կարիքների համար։

Մանր անասնապահության վոչ արդյունաբերական շրջաններում խոզերն ու վոչխարները չեն համայնացվում։ Ընտանի թռչունները չեն համայնացվում։

Մանր անասուններն ու թռչունները անհատական սեփականությանը թողնելով հանդերձ՝ Պրոմկոլխոզները կազմակերպում են համայնացրած արդյունաբերական մանր անասնապահություն և թռչնաբուծություն։

Անբերրիությունից և կերի պակասությունից ապահովվելու նպատակով, Պրոմկոլխոզները, սերմի և կերի անձեռնմխելի ֆոնդեր են կազմում։

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

## V. ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ-ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԵԼԻ (ՊՐՈՄԿՈԼԽՈԶԻ) ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

8. Պրոմկոլխոզի վարչությունը և բոլոր անդամները պարտավորվում են.

ա) Զարգացնել արհեստագործությունը, բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը և նպաստել նրա մեքենայացմանը:

բ) Ընդարձակել ցանքսի տարածությունը՝ իրենց տրամադրության տակ յեղած բոլոր հողամասերի օգտագործման, անբերրի հողերի պարարտացման ու լավ մշակման և ներքին հողաշինարարության միջոցով:

գ) Հասարակական սկզբունքներով, լրիվ չափով օգտագործել իրենց տրամադրության տակ յեղած ամբողջ քաշող ուժը, ինվենտարը, բոլոր տրակտորները, մեքենաները, ամբողջ սերմը և արտադրության մյուս միջոցները: Սեփական և փոխառու միջոցներով գնել տրակտորներ և արտադրության այլ միջոցներ՝ աստիճանաբար մեքենայացրած տնտեսության անցնելու նպատակով:

դ) Ապրանքային անասնապահությունը և թռչնաբուծությունը արագորեն զարգացնելու և հարկ յեղած բարձրության հասցնելու նպատակով՝ կատարել զոոտեխնիկական և անասնաբուժական ձեռնարկումներ:

ե) Պարարտացնել վարելահողերն ու մարգագետինները և բերքատվության բարձրացման համար անհրաժեշտ ագրիկուլտուր ձեռնարկումներ կատարել:

զ) Ըստ տեղի բնական պայմանների, զարգացնել գյուղատնտեսական արտադրության մյուս բոլոր ճյուղերը:

9. Անդամների սպասարկելու և ժողովրդական տնտեսության շահերի համար, նրանց ազատ աշխատանքը օգտագործելու նպատակով, Պրոմկոլխոզը կազմակերպում է դրսի աշխատանքները և իր անդամների միջոցով կատարում ճանապարհաշինարարական, փոխադրման, հողային, անտառահատական և այլ բնույթի աշխատանքներ, այդ աշխատանքները համաձայնեցնելով հասարակական պետական և կոոպերատիվ կազմակերպությունների արած հայտերին:



Անդամներին շրջանից դուրս գտնվող աշխատանքների ուղարկելիս՝ Պրոմկոլխոզը համաձայնեցնում է բանուժը հաշվառման յենթարկող և բաշխող օրգանների հետ:

10. Պրոմկոլխոզն իր շրջանում ապրող տնայնագործներին և արհեստավորներին կարող է հումույթ, նյութեղեն և գործիքներ մատակարարել, նույնպես և նրանց արտադրանքն իր միջոցով վաճառել միայն այն Արհեստագործական կոոպերատիվ միության հատուկ թույլտվությամբ, վորի անդամ է հանդիսանում ինքը, Պրոմկոլխոզը և այդ էլ միայն այն դեպքում, յերբ այդ գործարքները կատարվում են ազգաբնակչությանը կոոպերացման յենթարկելու և մասնավոր կապիտալի դեմ պայքարելու նպատակով:

11. Պրոմկոլխոզը իր անդամներին իրավական օգնություն է հասցնում և կարող է իր ներկայացուցիչների միջոցով, առանց իր անդամներից հատուկ լիազորագրի ստանալու, նրանց գործերով յելույթ ունենալ դատական և վարչական օրգաններում:

12. Պրոմկոլխոզի և նրա անդամների միջև, վերջինների կատարելիք աշխատանքների շուրջը ծագած հարաբերությունները, կարգավորվում են ընդհանուր ժողովի և Պրոմկոլխոզի վարչության կայացրած վորոշումներով, կանոններով ու հրահանգներով:

13. Արտադրական գործունեության հետ զուգընթաց, Պրոմկոլխոզը բոլոր հարկ յեղած միջոցներով բարելավում է իր անդամների, մանավանդ, կանանց և յերեխաների կենցաղային պայմանները: Ոժանդակում է իր անդամների կենցաղի կազմակերպմանը՝ սոցիալիստական սկզբունքներով կազմակերպում է հանրաճաշարաններ, մսուրներ և այլ ձեռնարկումներ: Միջոցներ է ձեռք առնում իր անդամների կուլտուրա-քաղաքական պատրաստականության մակարդակը բարձրացնելու համար, այդ նպատակով կազմակերպելով ակումբներ, ընթեր-

ցարաններ, գրադարաններ: Ոժանդակում է, պրոմկոլխոզի շրջանում դպրոցների և այլ կրթական հիմնարկությունների բացմանը:

## VI. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ

14. Պրոմկոլխոզի ամբողջ աշխատանքը, ինչպես արհեստագործության, այնպես էլ գյուղատնտեսության ասպարեզում, կատարվում է անդամների անձնական աշխատանքով:

Մասնագիտական պատրաստականություն պահանջող աշխատանքներ կատարելու համար թույլատրվում է Պրոմկոլխոզում կողմնակի անձանց (գյուղատնտես, ճարտարագետ, տեխնիկ) վարձու աշխատանքի կիրառումը:

15. Պրոմկոլխոզի ընդհանուր արհեստանոցներում և գյուղատնտեսության մեջ անդամների աշխատանքը կարգավորում է ընդհանուր ժողովը, կամ նրա լիազորությամբ՝ վարչությունը:

Արհեստագործական արտադրության կրճատման հետևանքով, Պրոմկոլխոզի բոլոր անդամներին միաժամանակ աշխատանք տալու հնարավոր չլինելու դեպքում, ընդհանուր ժողովը, կամ վարչությունը աշխատանքի հերթականություն է սահմանում Պրոմկոլխոզի անդամների միջև, առաջին հերթին աշխատանք տալով Պրոմկոլխոզի բատրակ և չքավոր անդամներին: Պրոմկոլխոզի վոչ մի անդամ իրավունք չունի իրեն հանձնարարված աշխատանքից հրաժարվելու:

16. Պրոմկոլխոզի անդամների աշխատանքը ճիշտ կազմակերպելու համար սահմանվում են արտադրական նորմաներ և աշխատանքների գնահատություն՝ ըստ նրանց բնույթի: Կատարվում է աշխատանքի հաշվառում, կիրառվում է աշխատանքի գործավարձի և վորոշ ժամանակով գործ տալու սիստեմները:

17. Պրոմկոլխոզի արհեստագործական գործունեությունը և նրա վերցրած կողմնակի աշխատանքներին մասնակցող անդամների հետ հաշվառք կատարելու



կարգը սահմանում է ընդհանուր ժողովը՝ յելնելով Արհեստագործական Միությունից այդ ուղղությամբ ստացված ցուցմունքներից:

18. Պրոմկոլխոզի գյուղատնտեսական գործունեությանը մասնակցող անդամների աշխատավարձի վճարումը կատարվում է հետևյալ կարգով. տնտեսական տարվա ընթացքում, Պրոմկոլխոզի անդամների կենսական պահանջները բավարարելու համար, կանխավճարի ձևով (դրամով կամ մթերքով) տրվում է նրանց կատարած աշխատանքի համար հասնող գումարի 50 %-ից վոչ ավելին: Տնտեսական տարվա վերջը աշխատավարձի վճարման վերջնական հաշվառք է կատարվում:

19. Պրոմկոլխոզի բոլոր անդամները պարտավորվում են յենթարկվել կանոնադրության պահանջներին, ընդհանուր ժողովի և վարչության վորոշումներին, կատարել ներքին կարգապահության կանոնները, վարչության հանձնարարած աշխատանքներն ու հասարակական պարտականությունները ճշտությամբ կատարել: Անձնական աշխատանքներով Պրոմկոլխոզի գործունեությանը մասնակցելը նրա անդամների համար պարտադիր է:

Համայնացված ինվենտարին և անասուններին անտնտեսավար և անփույթ վերաբերվելը, Պրոմկոլխոզի կողմից համարվում է իբրև դավաճանություն կոլեկտիվացման գործին և գործնական ոժանդակություն թշնամուն—կուլակին:

20. Պրոմկոլխոզի այն անդամը, վորն առանց հարգելի պատճառի, չի կատարում իր պարտականությունները կոլխոզի հանդեպ, չի յենթարկվում վարչության որինական վորոշումներին, գործում է ի վնաս Պրոմկոլխոզի շահերին, վնաս է հասցնում Պրոմկոլխոզի սոցիալիստական շինարարությանը՝ ընդհանուր ժողովի վորոշմամբ կարող է հեռացվել Պրոմկոլխոզի կազմից:

21. Համայնացված ինվենտարին և գույքին անտնտեսավար և անփույթ վերաբերմունք ցույց տալու համար, առանց հարգելի պատճառի աշխատանքի չը

դնալու և դիսցիպլինայի այլ խախտումների համար վարչությունը մեղավորներին ենթարկում է պատժի, համաձայն ներքին կարգապահության կանոնների (հանդիմանություն, նախազգուշացում, գործից ժամանակավորապես հեռացնել, տուգանք և այլն):

22. Այն դեպքերում, երբ Գրամկոլխոզի անդամներն աշխատանքն իրենց տանն են կատարում, պարտավոր են իրենց բաց թողած նյութեղենը և նրանցից պատրաստած արտադրանքը պահպանել ամբողջությամբ: Այդ նյութեղենը կամ պատրաստվածները փչանալու դեպքում Գրամկոլխոզի անդամները ենթարկվում են քրեական և նյութական պատասխանատվության:

23. Գրամկոլխոզը նյութական օժանդակություն է ցույց տալիս իր անաշխատունակ և ժամանակավորապես աշխատելու ընդունակությունից զրկված անդամներին: Այդ օգնության պայմաններն ու չափը, ըստ Գրամկոլխոզի նյութական հնարավորությունների՝ վորոշում է վարչությունը և հաստատում ընդհանուր ժողովը. ընդ վորում այդ օգնության չափը չպետք է ավել լինի նրանց միջին աշխատավարձից:

Գրամկոլխոզն ամեն միջոց ձեռք է առնում աշակերտությամբ արհեստներին վարժեցնելու և իր անդամների գյուղատնտեսական գիտելիքների մակարդակը բարձրացնելու համար:

24. Գրամկոլխոզը կարող է անդամագրվել արհեստագործական կոոպերացիայի փոխօգնության դրամարկղին: Այդ դեպքում, անդամներին կենսաթոշակ և նպաստ տալու չափն ու պայմանները սահմանվում են դրամարկղի կանոնադրությամբ ու կանոններով:

## VII. ԽՈՓՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԵՏ

25. Գրամկոլխոզը համապատասխան արհեստագործական միության անդամ է հանդիսանում:

Կազմակերպչական հարցերի և Գրամկոլխոզի ընդհանուր գործունեության ուղղության մասին վերաբերյալ Միության վորոշումներն ու ցուցմունքները



պարտադիր են այդ Միության անդամ հանդիսացող Գրամկոլխոզի համար:

Գրամկոլխոզն իրավունք ունի բողոքարկելու Միության վորոշումները վերադաս արհեստագործական կոոպերատիվ Միությանը:

Միության և նրա անդամ հանդիսացող Գրամկոլխոզի միջև, արհեստագործության, վաճառքի և մատակարարման ասպարեզում տեղի ունենալիք օպերատիվ հարաբերությունները կարող են սահմանվել Միության կողմից, վերջինիս վարչության կայացրած վորոշումների կարգով:

Միության վարչության այդպիսի բնույթ կրող վորոշումները Գրամկոլխոզի համար պարտադիր են, վորոշումը կայացնելու մոմենտից: Միության վարչության վորոշումները, Գրամկոլխոզը կարող է բողոքարկել վերադաս Արհեստագործական Կոոպերատիվ Միությանը:

Արհեստագործական Միության այն ցուցմունքները, վորոնք անմիջապես վերաբերում են Գրամկոլխոզի գյուղատնտեսական գործունեությանը՝ պետք է համաձայնեցված լինեն համապատասխան գյուղատնտեսական կոոպերացիայի միության հետ:

26. Գյուղատնտեսական գործունեության ասպարեզում, իր արտադրական պլանի հիման վրա, Գրամկոլխոզը կոոպերացիայի պայմանագիր է կնքում համապատասխան կոլխոզային միավորման հետ, վորով մի կողմից Գրամկոլխոզը պարտավորվում է կազմակերպել գյուղատնտեսական արտադրության գործն ու պլանային կարգով ամբողջ գյուղատնտեսական ապրանքային արտադրանքը պետությանն ու կոոպերացիային հանձնել, մյուս կողմից էլ, կոլխոզային միավորումն ու պետական և կոոպերատիվ կազմակերպությունները իրենց հերթին պարտավորվում են՝

Գրամկոլխոզին արտադրության միջոցներ ու սպառման մթերքներ մատակարարել, վարկային օգնություն կազմակերպել և ագրոտեխնիկական օժանդակություն ցույց տալ:

## VIII. ԱՆԴԱՄՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

27. Պրոմկոլխոզին կարող են անդամագրվել 16 տարեկանից սկսած բոլոր աշխատավորները: Պրոմկոլխոզում չեն ընդունվում կուլակներն ու ընտրողական ձայնի իրավունքներից զրկվածները:

Այն անձնավորություններն ու տնտեսությունները, որոնք Պրոմկոլխոզ մտնելուց առաջ լուծարքի չեն ենթարկում իրենց արտադրության գործիքները, մորթում, կամ ծախում են իրենց անասունները, լուծարքի չեն ենթարկում ինվենտարը, կամ չարամտորեն ցաք ու ցրիվ տալիս արհեստագործության համար անհրաժեշտ, պահեստի հումույթն ու սերմացույքը՝ Պրոմկոլխոզ չեն ընդունվում:

28. Պրոմկոլխոզի անդամների ընդունելությունը կատարում է վարչությունը, որը նոր ընդունված անդամների ցուցակը ներկայացնում է մոտակա գումարվելիք ընդհանուր ժողովին ի հաստատություն: Այն անձինք, որոնց վարչությունը մերժում է անդամ ընդունել, կարող են բողոքարկել ընդհանուր ժողովին:

29. Պրոմկոլխոզի ամեն մի անդամ իրավունք ունի Պրոմկոլխոզից հեռանալու, այդ մասին գրավոր դիմում տալով վարչությանը: Պրոմկոլխոզից հեռանալու ժամկետը հաշվվում է դիմում տալու օրից:

30. Պրոմկոլխոզի անդամը կարող է վտարվել անդամությունից ընդհանուր ժողովի որոշմամբ՝ սույն կանոնադրության 20-րդ հոդվածում նշված պատճառներով: Անդամությունից հանվածը՝ համարվում է Պրոմկոլխոզի կազմից հեռացված, ընդհանուր ժողովի կայացրած որոշման օրից:

31. Վարչությանն իրավունք ունի, յերրորդ անձնավորությունների հանդեպ Պրոմկոլխոզի ստանձնած պարտավորությամբ, ընդունած և արդեն սկսած աշխատանքներն ավարտելու նպատակով, պահանջել Պրոմկոլխոզից հեռացվող անդամից կատարել այդ աշխատանքներից իրեն հանձնարարված մասը վարչության որոշած ժամկետում, որը 2 շաբաթից ավել լինել չի



կարող: Հեռացող անդամը, վարչության այդպիսի առաջարկը չկատարելու դեպքում՝ պատասխանատու յե դրա հետևանքով Պրոմկոլխոզի կրած վնասի համար:

32. Յուրաքանչյուր Պրոմկոլխոզ մտնողը, պետք է մուծի դրամական մուտքի վճար:

ա) Մուտքի վճարը սահմանվում է. բատրակների համար 5 ռուբլի, Պրոմկոլխոզի միայն գյուղատնտեսական գործունեությանը մասնակցող չքավորների և միջակների համար՝ ըստ նրանց կարողության չափի —5—25 ռուբլի:

բ) Այն բանվորները, որոնք մշտապես զբաղվում են Պրոմկոլխոզից դուրս գտնվող աշխատանքով՝ բացի կանոնադրությամբ նախատեսված մուտքի վճարից, միաժամանակ մուծում են նաև իրենց տարեկան աշխատավարձի 3 տոկոսը:

ԾԱՆՈԹ. Բացի մուտքի վճարից, Պրոմկոլխոզը իր անդամ բանվորներից որևէ լրացուցիչ մուծում չի պահանջում նրանց աշխատավարձից:

գ) Պրոմկոլխոզի միայն արհեստագործական աշխատանքներին մասնակցող անդամների համար, մուտքի վճար է սահմանվում նրանց տարեկան աշխատավարձի 3 տոկոսի չափով:

դ) Պրոմկոլխոզի այն անդամները, որոնք մասնակցում են Պրոմկոլխոզի գյուղատնտեսական և այլ տեսակի գործունեությանը, բացի գյուղատնտեսական գործունեության համար. սահմանված 5—25 ռուբլին, միաժամանակ մուծում են նաև իրենց տարեկան աշխատավարձի 3 տոկոսը:

ե) Այն դեպքում, յերբ Պրոմկոլխոզ մտնողների յեկամուտի հիմնական աղբյուրն աշխատավարձն է կազմում, (գյուղատնտեսներ, ուսուցիչներ, հողաշինարարներ, Պրոմկոլխոզի շրջանում գտնվող հիմնարկությունների և կազմակերպությունների ծառայողներ) մուտքի վճարի չափը ամեն անգամ որոշում է վար-

չությունը, փոխարենը չի կարող նրանց տարեկան աշխատավարձի 10 տոկոսից գերազանցել:

դ) Մուտքի վճարի պայմանաժամերի բաժանելը կատարվում է միայն համապատասխան կոոպերատիվ միության կողմից սահմանված կարգով ու ժամկետներով:

33. Պրոմկոոպխոզի արհեստագործական պրոդմունքներին մասնակցող անդամների համար դրամական փայավճար է սահմանվում նրանց աշխատավարձի վորոշ տոկոսի չափով, ելնելով անդամագրվողի ընդհանուր նյութական դրությունից և յեկամուտներից: Այդ սկզբունքով վարչությունը Պրոմկոոպխոզի յուրաքանչյուր անդամի համար փայավճարը և սահմանում նրա յեկամտի 5 տոկոսից մինչև 12 տոկոսը:

Վարչության վորոշած փայավճարի չափի դեմ կարելի յե բողոքարկել ընդհանուր ժողովին:

Բացի դրամական մուծումներից, Պրոմկոոպխոզի փայի դրամագլխի մեջ է առնվում Պրոմկոոպխոզի անդամների համայնացված գույքի արժեքի 50-ից մինչև 75 տոկոսը: Բարձր տոկոսով փայի դրամագլխի մեջ առնելը կիրառվում է ավելի թույլ տնտեսություններում:

34. Համաձայն սույն կանոնադրության 40 հոդվածի, Պրոմկոոպխոզի անդամների համայնացված գույքի արժեքի այն մասը, վոր մնում է փայի դրամագլխի մեջ առնելուց հետո՝ մտցրվում է Պրոմկոոպխոզի անբաժանելի դրամագլուխների մեջ:

35. Պրոմկոոպխոզի կազմից հեռացած, կամ հեռացված անդամին կամ նրա իրավահաջորդին վերադարձվում է նրա փայավճարը, նույն տարվա հաշվետվությունն ընդհանուր ժողովի կողմից հաստատվելուց հետո, վոչ ուշ, քան 3 ամսվա ընթացքում. բավորում փայավճարից հանվում է հեռացող անդամին բաժին ընկնող վնասի մասը: Յեթե Պրոմկոոպխոզից հեռացող անդամը, կամ նրա իրավահաջորդը լրիվ կերպով չեն կատարել Պրոմկոոպխոզի հանդեպ իրենց բոլոր



պարտավորությունները՝ հիշված 3 ամսվա ժամկետը հաշվվում է այդ պարտավորությունները կատարելուց: Բացի հիշված գումարից, հեռացված կամ հեռացած անդամն իրավունք չունի Պրոմկոոպխոզին պատկանող գույքից վորևէ բաժին ստանալու:

Բացառիկ դեպքերում, Պրոմկոոպխոզի ընդհանուր ժողովի վորոշմամբ և միության համաձայնությամբ, փայավճարը կարող է վերադարձվել վերոհիշյալ ժամկետից առաջ:

Պրոմկոոպխոզի գյուղատնտեսական գործունեությանը մասնակցող անդամի հեռանալու դեպքում, նրան կարելի յե բաժնեհող տալ միմիայն Պրոմկոոպխոզի դաշտի սահմաններից դուրս գտնվող հողերից:

36. Պրոմկոոպխոզի գործունեության շրջանից դուրս աշխատող անդամները, իրենց զբաղմունքից ստացած աշխատավարձի 3–10 տոկոսը հատկացնում են Պրոմկոոպխոզին:

Այդ տոկոսների սահմաններում, հատկացման գումարի չափը վորոշում է Պրոմկոոպխոզի ընդհանուր ժողովը:

## IX. ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

37. Արհեստագործական և գյուղատնտեսական գործունեության համար Պրոմկոոպխոզն ունի առանձին-առանձին դրամագլուխներ, վորոնք բաղկացած են՝ հիմնական, պահեստի և հատուկ դրամագլուխներից:

38. Հատուկ դրամագլուխները կազմվում են.

ա) Պրոմկոոպխոզի անդամների մուտքի դրամական վճարներից.

բ) Հատկապես դրա համար փոխ առած գումարներից և ընդհանուր ժողովի վորոշման հիման վրա Պրոմկոոպխոզի անդամների կողմից կատարվող մուծումներից:

39. Պրոմկոոպխոզի վարչությունը անդամներից գանձված մուտքի վճարները, ըստ կարևորության՝ բաժանում է արհեստագործական և գյուղատնտեսական

գործունեության ճյուղերին հատկացված դրամագլուխների միջև։

40. Հիմնական դրամագլուխը կազմվում է.

ա) Փայավճարներից.

բ) Հատկապես այդ նպատակով կատարած փոխառություններից.

գ) Եկամուտից կատարված հատկացումներից.

դ) Անբաժանելի դրամագլուխներից.

ե) Այլ մուծումներից։

41. Պահեստի դրամագլուխը կազմվում է Պրոմկոլխոզի մաքուր օգուտից կատարվող հատկացումներից։

Մինչև Պրոմկոլխոզի մյուս բոլոր սեփական դրամագլուխների (բացի փայադրամագլխից) 20 տոկոսին հավասարվելը՝ պահեստի դրամագլխին ամեն տարի պետք է հատկացնել Պրոմկոլխոզի օգուտի 10 տոկոսը։ Պահեստի դրամագլխին հետագա հատկացումներ կատարելը կախված է ընդհանուր ժողովի հայեցողությունից։ Պահեստի դրամագլխի պահելն ու օգտագործելը կատարվում է օրենքով սահմանված կանոնների համաձայն։

42. Պրոմկոլխոզի ընդհանուր ժողովը կարող է իր անդամների համար—բացառությամբ մշտապես Պրոմկոլխոզից դուրս աշխատող բանվոր անդամների—պարտադիր մուծումներ սահմանել՝ հիմնական և հատուկ գյուղատնտեսական դրամագլուխներին հատկացնելու նպատակով։

Այդ պարտադիր մուծումների առավելագույն չափը չի կարող գերազանցել փայավճարի չափից։

43. Հիմնական դրամագլխի Պրոմկոլխոզի գործունեության այս կամ այն ճյուղում օգտագործելու խնդիրը կախված է վարչությունից։

44. Միջոցների բաշխումը գյուղատնտեսական և արհեստագործական ճյուղերի միջև կատարվում է համաձայն ընդհանուր ժողովի հաստատած պլանի։ Աշխատանքի մի ճյուղին (գյուղատնտեսական և արհեստագործական) հատկացված միջոցները կարող են օգ-



տագործվել մյուս ճյուղի ասպարեզում, միմիայն ընդհանուր ժողովի ձայների 2/3-ով ընդունված վորոշումների հիման վրա։

45. Տնտեսական տարին փակելուց հետո, Պրոմկոլխոզի գյուղատնտեսական գործունեությունից ստացված օգուտի մի մասը հատկացվում է տնտեսական և գյուղատնտեսության հետ կապված ծախսերի ծածկելուն, մի մասը հատկացվում է անբաժանելի և հասարակական ֆոնդերին (10—30 տոկոս անբաժանելի ֆոնդին, 5—15 տոկոսը մյուս հասարակական ֆոնդերին), մնացած մասը բաժանվում է կոլտնտեսականների միջև։

Արհեստագործության ասպարեզում կատարած աշխատանքի համար, Պրոմկոլխոզի անդամն աշխատավարձ է ստանում համաձայն այս կանոնադրության 17 հոդվածի։ Յեթե ընթացիկ տարվա վերջը, արհեստագործական աշխատանքներից Պրոմկոլխոզը, իր բոլոր ծախսերը ծածկելուց հետո, վորոշ մաքուր օգուտ է ստանում, դրանից, հարկերը վճարելուց և ըստ օրենքի պարտադիր մուծումները կատարելուց հետո, մնացած գումարը, Պրոմկոլխոզի ընդհանուր ժողովի վորոշմամբ, հատկացվում է անբաժանելի միջոցներին, բաշխվելով ըստ դրամագլուխների։

46. Պրոմկոլխոզի արհեստագործական շրջանառությունից ստացված վնասը ծածկվում է ի հաշիվ պահեստի դրամագլխի։ Յեթե այդ միջոցով ամբողջ վնասը չի ծածկվում, ընդհանուր ժողովը կարող է վնասի բաց մնացած մասը բաժանել արհեստագործության ճյուղում աշխատող անդամների վրա, ըստ նրանց սոցիալական-նյութական պայմանների։ Անդամներին բաժին ընկած վնասը ծածկելու համար, ընդհանուր ժողովը ժամկետ է նշանակում, վորպիսին պետք է լինի վոչ ուշ քան տարվա վերջը։ Վորևե անդամ իրեն բաժին ընկած վնասի գումարը չվճարելու դեպքում՝ վարչությունը նրանից գանձում է դատական կարգով։ Այն գումարը, վոր տարվա ընթացքում հնարավոր չի լինի

60332-67

Гос. Библиотека
ИНСТИТУТА
ՀԱՍՌ — Арм ССР
Академии Наук
С.С.С.Р.

գանձել մի անդամից, նույն հաշվով բաշխվում է և գանձվում է մնացած անդամներից:

47. Պրոմկոլխոզի լուծարքի յենթարկվելու դեպքում, նրա բոլոր պարտքերն ու ստանձնած պարտավորություններից բղխող վճարումները կատարելուց և անդամների փայավճարները վերադարձնելուց հետո, դրամագլուխների և գույքի մնացորդը հանձնվում է այն կոոպերատիվ միությանը, որի անդամն էր հանդիսանում Պրոմկոլխոզը:

## X. ՊՐՈՄԿՈԼԽՈԶԻ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐԵԼԸ

48. Պրոմկոլխոզի գործերը կառավարում է անդամների ընդհանուր ժողովը և վարչությունը: Անդամների շատության կամ գյուղերի ցրվածության հետևանքով ընդհանուր ժողով գումարելը դժվարության հանդիպելու դեպքում, ընդհանուր ժողովը փոխարինվում է լիազորների ժողովով:

Լիազորական ժողովի անդամներն ընտրվում են առանձին գյուղերի Պրոմկոլխոզի անդամների ժողովի կողմից, կամ ըստ գործունեյության տարածքների յուրաքանչյուր . . . . անդամից մի հոգի:

49. Ընդհանուր ժողովը (կամ լիազորական ժողովը) Պրոմկոլխոզի ղեկավար, բարձր օրգանն է համարվում, լուծում է Պրոմկոլխոզի գործունեյությանը վերաբերյալ կարեվորագույն խնդիրները, վարչություն և վերստուգիչ հանձնաժողով է ընտրում և հաստատում է նրանց աշխատանքի ծրագիրը:

Ընդհանուր ժողովը (կամ լիազորական ժողովը) օրինական է համարվում բոլոր անդամների թվի կեսից վոչ պակաս ներկա լինելու դեպքում: Ընդհանուր ժողովը (կամ լիազորական ժողովը) իր վորոշումները կատարում է բաց քվեարկությամբ և ձայների մեծամասնությամբ:

50. Պրոմկոլխոզի վարչությունն ընտրվում է մեկ տարով. նա գործադիր օրգան է հանդիսանում և վարում է Պրոմկոլխոզի գործերը:



Պրոմկոլխոզի տնտեսությունը և արտադրությունը ղեկավարելու պարտականությունները վարչությունը բաժանում է իր անդամների մեջ. լիակատար պատասխանատվություն է դնում վարչության համապատասխան անդամների վրա նրանց հանձնարարած գործի համար, միաժամանակ անհրաժեշտ իրավունքներ վերապահելով նրանց:

51. Ընդհանուր ժողովն ու վարչությունը ղեկավարում են Պրոմկոլխոզի ամբողջ գործունեյությունը— արհեստագործական, գյուղատնտեսական և աշխատանքային տարածքներում:

Վերոհիշյալ բոլոր տեսակի գործունեյության տարածքներում Պրոմկոլխոզի անդամների աշխատանքի օգտագործման և այդ աշխատանքների պլանային իրագործումն ապահովող կարգը սահմանում է Պրոմկոլխոզի վարչությունը:

52. Վարչությունը պարտավոր է հաշվետվություն տանել ըստ սահմանված ձևի և կանոնների:

Պրոմկոլխոզի թղթակցությունները կատարում է վարչությունը, նախագահի կամ վարչության մի անդամի ստորագրությամբ: Պրոմկոլխոզի պարտավորագրերը, չեկերը և լիազորագրերը պետք է ստորագրեն նախագահը և վարչության մի անդամը կամ վարչության յերկու անդամը:

53. Վերստուգիչ հանձնաժողովը ստուգում է վարչության գործունեյությունը, մանավորապես՝ կանոնադրությունը կիրառելու, արտադրական պլանի և օրենության հանդեպ ունեցած պարտավորությունների կատարման նկատմամբ: Դրամարկղի, գույքի, փաստաթղթերի և հաշվետվության ստուգում է կատարում: Իր յեզրակացությունն է տալիս տարեկան հաշվետվության մասին և իր գործունեյության համար հաշվետու է ընդհանուր ժողովի (կամ լիազորական ժողովի) առաջ:

## XI. ՊՐՈՄԿՈԼԽՈԶԸ ԼՈՒԾԱՐՔԻ ՅԵԹԱՐԿԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

54. Պրոմկոլխոզի գործունեության դադարեցումը կարող է տեղի ունենալ կոոպերատիվ կազմակերպությունների դադարեցման մասին գոյություն ունեցող 1927 թվի հունիսի 15-ի որենսդրությամբ նախատեսված կարգով (Որ.-ժող. 1927 թ. № 37, 372 հոդված):

55. Պրոմկոլխոզի լուծարքի կարգը վորոշում է ընդհանուր ժողովը, համաձայն վերոհիշյալ 1927 թվի հունիսի 15-ի որենսդրության կանոնների:

56. Պրոմկոլխոզի պարտքերը վճարելուց և փայերը անդամներին վերադարձնելուց հետո, մնացած գույքը հանձնվում է այն կոոպերատիվ միությանը, վորին անդամ է հանդիսանում Պրոմկոլխոզը, իսկ յեթե Պրոմկոլխոզը միության անդամ չի յեղել, այդ դեպքում հանձնում է իր անմիջական վերադաս արհեստագործական կոոպերատիվ միությանը:

. . . . . . . . . . . . . .

. . . . . . . . . . . . . .

. . . . . . . . . . . . . .

. . . . . . . . . . . . . .

. . . . . . . . . . . . . .

## ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ—ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԵԼԻ (ՊՐՈՄԿՈԼԽՈԶԻ) ՀԻՄՆԱԴԻՐՆԵՐԻՆ

### ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ-ԳՅՈՒՂԱ-ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՄԱՆ ԿԱՐԳԸ

Վերը բերված կանոնադրությունը հանդիսանում է որինակելի:

Արտելի հիմնադիրները այս կանոնադրության տեքստի մեջ կարող են մտցնել այն լրացումներն ու փոփոխությունները, վորպիսին նրանք անհրաժեշտ կը գտնեն, սակայն այդ փոփոխություններն ու լրացումները չպետք է հակասեն արհեստագործական կոոպերա-



ցիայի և կոլխոզ շինարարության մասին գոյություն ունեցող որենքները կանոններին:

Որինակելի կանոնադրությունն ընդունելով, հիմնադիրները, մինչև այն ստորագրելն ու տոմարագրող մարմիններին ներկայացնելը, պետք է լրացնեն կանոնադրության տեքստի մեջ ազատ թողած տեղերը. այսինքն՝ վերնագրում, «վոր անվանվում է» բառերից հետո պետք է գրել արտելի գտնվելու տեղը—որինակ Ղասաբլվե «արհեստագործական-գյուղատնտեսական», հետո, արտելի գործունեության բնույթն ու զբաղմունքը և արտելի անունը, որինակ «Նոր կյանք» և այլն: 1 հոդվածում «շրջանի» բառից առաջ պետք է գրել վարչական շրջանի անունը, իսկ «գյուղի բնակիչները» բառերից առաջ՝ Պրոմկոլխոզի մեջ ընդգրկվող գյուղերի անունները: 2-րդ հոդվածում, «վոր կազմակերպում է» բառերից հետո պետք է հիշատակել այն արհեստագործության անունը, վորով պետք է զբաղվի Պրոմկոլխոզը, նույնպես և «կազմակերպել և զարգացնել» բառերից հետո պետք է գրել այն զբաղմունքի անունը, վոր կազմակերպում է Պրոմկոլխոզը:

48 հոդվածում «յուրաքանչյուր» բառից հետո պետք է գրել մի լիազոր ընտրող Պրոմկոլխոզի անդամների թիվը, որինակ՝ «յուրաքանչյուր 25 անդամից—մի հոգի»:

Որինակելի կանոնադրության տեքստի մեջ վորևէ փոփոխություն մտցնելու դեպքում, հիմնադիրները պետք է ջնջեն փոխած տեղերը և ավելացնեն մտցրվող փոփոխությունները: Այդ ուղղումների մասին պետք է հիշատակել կանոնադրության վերջում, հիմնադիրների ստորագրություններից վերև:

## ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՏՈՄԱՐԱԳՐՈՒՄԸ

Արհեստագործական-գյուղատնտեսական արտելի կանոնադրությունը յենթակա յե տոմարագրման: Դրա համար, թե կանոնադրությունը և թե այն հայտարարությունը, վորին առդիր ներկայացվում է կանոնա-

դրությունը տոմարագրման համար, պետք է ստորագրված լինեն ոչ պակաս, քան 5 հիմնադիրների կողմից։ Հիմնադիրները կարող են լինել կոոպերացման շրջանում (հոդված 1.) բնակվող 18 տարին լրացած այն բոլոր քաղաքացիները, որոնք զրկված չեն խորհուրդների ընտրություններում ընտրողական ձայնի իրավունքից։

Հիմնադիրներ չեն կարող լինել միմյանց հետ ամուսնական կապով կապված և մոտիկ ազգակցության մեջ գտնվող անձնավորությունները. այն է՝ որդիներ և հայրեր, քույրեր և եղբայրներ, պապեր և թոռներ։ Հիմնադիրների ստորագրությունները հայտարարության տակ պետք է վավերացնի նոտարը (սրա բացակայության դեպքում՝ ժողդատավորը), կամ շրջանային գործադիր կոմիտեն, կամ գյուղխորհուրդը։

Կանոնադրության տակ հիմնադիրների ստորագրությունների վավերացումը չի պահանջվում։ Հայտարարության մեջ կարող է ցույց տրվել այն անձնավորությունը, որին հիմնադիրները լիազորում են տանել տոմարագրման գործը։ Այդ անձնավորությունը կարող է և չպատկանել հիմնադիրների թվին։ Անկախ դրանից, տոմարագրման համար տրվող հայտարարության մեջ պետք է հիշատակել այն անձնավորության անունն ու հասցեն, որը լիազորվում է ստանալ տոմարագրման գործին վերաբերյալ փաստաթղթերը։

Հայտարարության հետ պետք է ներկայացվեն

ա) Հիմնադիրների կողմից ստորագրված կանոնադրության 4 բոլորովին միատեսակ օրինակներ։

բ) Համապատասխան մարմինների կողմից տրված տեղեկանք այն մասին, որ հիմնադիրները խորհուրդների ընտրություններին օգտվում են ընտրական ձայնի իրավունքով։ Հիմնադիրների ստորագրությամբ վավերացված հիմնադիրների ցուցակը, որում պետք է ցույց տրված լինի նրանց անունը, հայրանունը, ազգանունը, հասակը, որտեղ բնակվելը և զբաղմունքը։ Ցուցակում պետք է հիշատակված լինի նաև



թե չկան նրանց մեջ ամուսիններ կամ ազգակցությամբ կապված անձինք։

Հայտարարությունը և կանոնադրության օրինակները պետք է ստորագրված լինեն լրիվ կերպով. այն է՝ հիմնադրի անունը, հոր անունը և ազգանունը։

Հայտարարության ու կանոնադրությունների դրոշմանիշեր չեն փակցվում և առհասարակ ազատ են տոմարագրման և ամեն տեսակի ծախսերից։

Արտելների տոմարագրման կարգը ՀՍԽՀ-ում սահմանված է Արհեստագործական-գյուղատնտեսական կոոպերացիայի մասին կանոնադրության ... հոդվածներով...

Համաձայն հիշյալ օրենքի, այն արտելները, որոնք ընդգրկված են մի շրջանում, տոմարագրվում են տեղական (ըստ վարչության գտնված վայրի) շրջանային գործադիր կոմիտեների կողմից, իսկ այն արտելներում, որոնց կոոպերացման շրջանը մեծ է մի շրջանից, տոմարագրվում են Ժողովրդական տնտեսության մարմինների կողմից։

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆՄՈՒՇԸ

........................................................ին

(ցույց տալ այն պետական մարմինը, որի վրա օրենքով դրված է տվյալ արտելի կանոնադրության տոմարագրումը)

........................................................ արտելի

Հիմնադիրներից

Ցույց տալ արտելի անունը (տես կանոնադրության վերնագիրը)

1)
2)
3) } Ցույց տալ յուրաքանչյուր հիմնադրի անունը, հայրանունը, ազգանունը և բնակավայրը
4)
5)

Հայտարարություն

Առդիր ներկայացնելով . . . . . . արտելի

կանոնադրության 4 բոլորովին միանման օրինակներ, խնդրում ենք տոմարագրել: Միաժամանակ միևնույն արտադրությամբ զբաղվող յերկու արտելի անդամ լինելու արգելքի մասին մեզ հայտնի չէ և մենք հայտարարում ենք, որ մեզանից վոչ մեկը նույնանման արտադրությամբ զբաղվող վորևէ այլ արտելի անդամ չի հանդիսանում:

Սույն հայտարարությունը տալու և արտելի տոմարագրված կանոնադրությունն ստանալու, ինչպես նաև արտելի կանոնադրության մեջ ուղղումներ (յեթե այդ ուղղումները վերաբերում են գոյություն ունեցող օրենքներին հակասող կետերը, կամ կրում են խմբագրական բնույթ) մտցնելու համար լիազորում ենք.

. . . . . . . . . . . . .

(ցույց տալ անունը, հայրանունը և ազգանունը)

վորը բնակվում է . . . . . . . . . .

(ցույց տալ լիազորի բնակավայրը և հասցեն)

. . . . . . . . . . . . .

Հիմնադիրներ՝ (նրանց ստորագրությունները՝ անունները, հայրանունները և ազգանունները)

. . . . . . . . . . . . .

19____ թ. .................... ամսի « »-ին հիմնադիրներ 1) .................... 2) .................... 3) ....................

4) .................... 5) ....................

Սեփական ստորագրությունները . . . . .
. . . . . . . . վավերացնում է:

Վերոհիշյալ հիմնադիրները զրկված չեն խորհուրդներում ընտրական իրավունքից:

Նախագահ՝

Քարտուղար՝

ՊԵՏ. ԿԵՆ. ԳՐ. ԴԱՐ.
Гос Библиотека
ՀՍՍՌ Арм. ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

[illegible] տպարան
Տիրաժ 360

ՀՀ Ազգային գրադարան
NL0203220